

Արմեն Ց. Մարուքյան
Պատմ. գիտ. դոկտոր

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱԿ-Ի
1948 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ
ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Վերլուծություն և առաջարկներ փաստաթղթի ընդունման
70-ամյակի կապակցությամբ*

Բանալի բառեր – Օսմանյան կայսրություն, Հայոց ցեղասպանություն, Համահայկական հռչակագիր, ցեղասպանության հետևանքների հաղթահարում, ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիա, Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացություն:

Մուտք

2018 թ. դեկտեմբերի 9-ին լրացավ ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի (այսուհետև՝ Ցեղասպանության մասին կոնվենցիա) ընդունման 70-ամյակը: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում ընդունված Համահայկական հռչակագրի լույսի ներքո կրկին անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ Հայոց ցեղասպանության նկատմամբ այդ փաստաթղթի դրույթների կիրառելիության հարցին:

2015 թ. հունվարի 29-ին Ծիծեռնակաբերդի վեհաշուք հուշահամալիրի մոտ պաշտոնապես հրապարակվեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը», որով պաշտոնական միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովն ու Սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերը համայն հայության անունից հայտարարեցին, որ այդ պահից ի վեր մեկնարկում է հայ ժողովրդի միասնական պայքարը ոչ միայն Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման, այլև դրա հետևանքների հաղթահարման համար: Այդ առումով ենթադրվում էր իրավական պահանջների թղթածրարի մշակում՝ դիտելով այն որպես անհատական, համայնքային և համազգային իրավունքների և

ԺԱ (ԺԷ) փարի, թիվ 1 (65), հունվար-մարտ, 2019
ՎԿՎ համահայկական հանդես

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.09.2018:

օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ¹:

Համահայկական հռչակագրի ընդունումով հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության հետևանքների հաղթահարման նոր օրակարգի առաջադրումը որպես Հայոց պահանջատիրության գաղափարի դիվանագիտական ձևակերպում, կրկին արդիական է դարձնում Հայոց ցեղասպանության նկատմամբ ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի կիրառելիության հարցը:

1. Կոնվենցիայի կիրառելիության հարցում մասնագետների մտտեցումների հոլովույթը

Հայոց ցեղասպանության նկատմամբ Ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթների կիրառելիության հարցում թուրք «մասնագետների» դիրքորոշումը միանգամայն կանխատեսելի էր: Նրանք միանշանակ պնդում էին, որ 1948 թ. ընդունված և 1951 թ. ուժի մեջ մտած ՄԱԿ-ի Ցեղասպանության մասին կոնվենցիան չի կարող հետադարձ ուժ ունենալ և տարածվել 19-րդ դարավերջին ու 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում հայերի հետ կատարված դեպքերի վրա: Օրինակ, տխրահոչակ «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի»^{*} անդամ Գյունդուզ Աքթանի կարծիքով՝ Ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց առաջ տեղի ունեցած արարքների նկատմամբ կոնվենցիայի դրույթների կիրառումը կդիտվի որպես *nullum crimen sine lege*^{**} հայտնի իրավական սկզբունքի խախտում, քանզի ցեղասպանության հանցագործությունը միջազգային իրավունքում առաջին անգամ սահմանվել է միայն Ցեղասպանության մասին կոնվենցիայում²: Շրջանցելով Ցեղասպանության մասին կոնվենցիայում այդ հանցագործության սահմանումին և դրա հանցակազմին հայերի զանգվածային բնաջնջման համապատասխանելիության հարցը և գերազանցապես վիճարկելով այդ դեպքերի նկատմամբ փաստաթղթի դրույթների հետադարձ կիրառելիության հնարավորությունը՝ Աքթանն, ըստ էության, անուղղակիորեն ընդունում էր, որ 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ իրականացվածը ցեղասպանություն է, որի նկատմամբ, սակայն, կոնվենցիան հետադարձությամբ կիրառել հնարավոր չէ: Թուրք «մասնագետին», այսպիսով, գերազանցապես մտահոգում էր Հայոց ցեղասպանության նկատմամբ Ցեղասպա-

1 Տե՛ս «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը», <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/>:

^{*} 2001 թ. հուլիսի 10-ին ստեղծված և մինչև 2003 թ. ամառ գործունեություն ծավալած այս ոչ պաշտոնական հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվել էին 6 թուրք և 4 հայ նախկին պաշտոնյաներ ու քաղաքական գործիչներ, իր նպատակն էր հռչակել երկխոսություն սկսել թուրքերի ու հայերի միջև և նախանշել երկու ժողովուրդների հաշտեցման հնարավորությունները: Պաշտոնապես այս հանձնաժողովի ստեղծման ու գործունեության պատասխանատվությունը ստանձնել էր Վիեննայի դիվանագիտական ակադեմիան, սակայն հետագայում պարզվեց, որ հանձնաժողովի գործունեությունն ուղղորդվում է ԱՄՆ Պետքարտուղարության կողմից: Թեև հայտարարվել էր, որ հանձնաժողովում Հայոց ցեղասպանության հարցը չի քննարկվելու, այդուհանդերձ, հենց այդ հարցը դարձավ քննարկման գլխավոր առարկան, որի շուրջ առաջացած հակադիր մտտեցումների պատճառով էլ այն երկու տարի անց դադարեցրեց իր գործունեությունը: Տե՛ս **Անանյան Ա.**, Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին), Եր., Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., 2003, էջ 142, 148:

^{**} Չկա հանցագործություն չնշված օրենքում (լատ.):

2 Տե՛ս **Gündüz Aktan**, Armenian Problem and International Law in Turkakaya Atoav (ed). The Armenians in the Late Ottoman Period. TTK Press, Ankara, 2001, էջ 265, 305:

նության մասին կոնվենցիայի հետադարձ կիրառելիության հարցն այն պատճառով, որ դրա հնարավորությունը կարող է հանգեցնել թուրքերի և թուրքական պետության պատասխանատվությանը:

Ռուսաստանից հետագոտող Ս. Կոչոյը «ցեղասպանություն» եզրույթի ի հայտ գալուց և Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումից առաջ ազգային կամ կրոնական խմբերի ոչնչացման դեպքերը որպես ցեղասպանություն որակելը նույնպես իրավաչափ չի համարում: Նա գտնում է, որ այդ դեպքերը պետք է որակվեն դրանց կատարման պահին գործող օրենքներով և անվիճելիորեն պետք է դատապարտվեն միջազգային հանրության կողմից, սակայն ֆորմալ առումով դրանք ցեղասպանություն որակվել չեն կարող, քանզի Ցեղասպանության մասին կոնվենցիան հետադարձ ուժ չունի³:

Միջազգային իրավունքի հայազգի մասնագետ Յու. Բարսեղովը մի ամբողջ գրքով պատասխանեց Գյունդուզ Աքթանի հողվածին՝ դիպուկ նկատելով, որ եթե ցեղասպանության հանցագործության հանցակազմի արարքների որակումը պայմանավորենք միայն կոնվենցիայի ուժի մեջ մտելու հանգամանքով և առաջնորդվենք թուրք մասնագետի հայեցակարգի «տրամաբանությամբ», ապա Կոնվենցիայի կիրառումը ստիպված կլինենք սահմանափակել միայն այն ստորագրած ու վավերացրած պետությունների շրջանակով, ինչն անհեթեթ է⁴: Հիմնվելով նացիստ հանցագործների նկատմամբ Նյուրնբերգյան տրիբունալի և միջազգային արդարադատությունից խուսափած Ադոլֆ Էյսմանի նկատմամբ Իսրայելի դատարանի հետադարձությանը կայացրած դատավճիռների նախադեպերի վրա՝ Բարսեղովը եզրակացնում էր, որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթները միանգամայն կարող են տարածվել դրա ուժի մեջ մտնելուց առաջ կատարված դեպքերի վրա⁵:

ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի՝ Հայոց ցեղասպանության նկատմամբ հետադարձ ուժ ունենալու հարցին Յու. Բարսեղովից⁶ բացի անդարձարձել են նաև Շ. Թորիկյանը, Ա. դը Ջայասը և ուրիշներ, որոնք իրենց աշխատություններում հիմնավորել են Հայոց ցեղասպանության նկատմամբ Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձ կիրառելիության հնարավորությունը:

Լոնդոնի և Օքսֆորդի համալսարանների դասախոս, հայազգի մասնագետ Շավարշ Թորիկյանն այն տեսակետն էր արտահայտում, որ Ցեղասպանության մասին կոնվենցիան ընդամենը կողիֆիկացրել, այսինքն՝ ընդհանրացրել ու համակարգել է ազգային ու կրոնական խմբերի ոչնչացումը դատապարտող միջազգային իրավական այն նորմերը, որոնք գոյություն են ունեցել և գործել են մինչ այդ փաստաթղթի ընդունումը: Բացի այդ, նա

3 Տե՛ս Կочой С., Геноцид: понятие, ответственность, практика, «Уголовное право», М., 2001, N 2, էջ 10-12:

4 Տե՛ս Барсегов Ю. Г., Турецкая доктрина международного права на службе политики геноцида (о концепции члена «комиссии примирения» Гюндюз Актана), М., «Готика», 2002, էջ 55:

5 Տե՛ս Կոչոյի Геноцид армян – преступление по международному праву, М., «XXI век – Согласие», 2000, էջ 61-70:

6 Տե՛ս Կոչոյի Геноцид армян – преступление против человечества. О правомерности термина и юридической квалификации, Ер., «Айастан», 1990; Ответственность государства за геноцид в международном праве, «Геноцид – преступление против человечества. Материалы I московского международного симпозиума», М., 1997; К вопросу о применимости конвенции 1948 года к геноциду армян, «Вестник Армянского института международного права и политологии в Москве», N 1, М., 2004:

նշում էր, որ քանի որ թուրքական իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանական քաղաքականությունը շարունակվում է այլ միջոցներով, այսինքն՝ հանցագործությունը դեռ չի ավարտվել, ուրեմն Ցեղասպանության կոնվենցիայի դրույթները միանգամայն կիրառելի են Հայոց ցեղասպանության նկատմամբ⁷:

Միջազգային իրավունքի շվեյցարացի մասնագետ Ալֆրեդ դե Ջայասը հիմնվելով այն կանխավարկածի վրա, որ միջազգային ծանր հանցագործությունների, մասնավորապես՝ ցեղասպանության հանցագործության վրա հետադարձությունը չթույլատրող նորմը չի տարածվում՝ նույնպես պնդում էր, որ ՄԱԿ-ի Ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթները կարող են կիրառվել Հայոց ցեղասպանության նկատմամբ⁸:

Ինչպես տեսնում ենք, փորձագիտական շրջանակներում Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձ կիրառելիության հարցում միասնական մոտեցում չկա, և մասնագետներն արտահայտում են տարբեր, երբեմն նույնիսկ իրարամերժ տեսակետներ:

2. Կոնվենցիայի կիրառելիության հարցն այդ փաստաթղթի բովանդակության լույսի ներքո

Միջազգային պայմանագրերի հետադարձ ուժի հարցին հստակ պատասխան է տալիս «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 28-րդ հոդվածը, որով ընդհանուր առմամբ սահմանվում է պայմանագրերի հետադարձ ուժ չունենալու սկզբունքը, եթե պայմանագրից այլ մտադրություն չի հետևում, կամ այլ կերպ չի սահմանված⁹: Այս առումով պետք է նշել, որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի բովանդակությունից, մասնավորապես՝ նախաբանից ու առաջին հոդվածի ձևակերպումներից հստակ երևում է այն ընդունող պետությունների կողմից տվյալ փաստաթղթի նաև ռետրոակտիվ՝ հետադարձ ուժով կիրառելու մտադրությունը: Կոնվենցիայի նախաբանում պայմանավորվող կողմերը, որպես իրենց կողմից այդ փաստաթուղթը ստորագրելու շարժառիթ, նշել են հետևյալը. «**ընդունելով, որ ցեղասպանությունը պատմության ողջ ընթացքում մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը...**»¹⁰ (ընդգծումը մերն է - Ա. Մ.): Սա ոչ այլ ինչ է, քան կոնվենցիան ստորագրող պետությունների, այդ թվում՝ Թուրքիայի Հանրապետության կողմից մինչև դրա ընդունումը կատարված ցեղասպանության դեպքերի, այսինքն՝ ոչ միայն Ռոջակիզման, այլև Հայոց ցեղասպանության անուղղակի ձանաչում: Հատկանշական է, որ փաստաթղթի նախաբանում խոսքը ոչ միայն պատմության վերջին շրջանի՝ Երկրորդ աշխարհամարտի ընթացքում ցեղասպանության պատճառած մարդկային կորուստների, այլև «պատմու-

7 Տե՛ս Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրութ, Համազգայինի Վահե Սեթեան տպարան, 1976, էջ 66; Toriguan S., The Armenian Question and International Law, La Verne, ULV Press, 1988, p. 33-34.

8 Տե՛ս Alfred de Zayas, Memorandum on the genocide against Armenians 1915-1923 and the application of the 1948 Genocide Convention, Beirut, Published by Haigazian University, 2010, էջ 7-8:

9 Տե՛ս Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիան, Եր., 1997, էջ 23:

10 Права человека. Сборник международных договоров, т. 1, ч. 2, Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 1994, с. 780.

թյան ողջ ընթացքում», այսինքն նաև տասնամյակներ առաջ՝ Առաջին աշխարհամարտի ընթացքում մարդկությանը, մասնավորապես՝ հայությանը պատճառված «մեծ կորուստների» մասին է: «Մարդկությանն այդ զագրելի աղետից ազատելու» մղումով են կոնվենցիան ստորագրող երկրները պայմանավորում միջազգային համագործակցության գնալու, այսինքն՝ կոնվենցիան ստորագրելու իրենց քայլը¹¹:

Փաստաթղթի առաջին իսկ հոդվածն ավելի է ուժգնացնում նախաբանում նշված ձևակերպումները: Հոդվածն ամրագրում է. «Պայմանավորվող կողմերը հաստատում են (ընդգծումը մերն է – Ա. Մ.), որ ցեղասպանությունը, անկախ նրանից իրականացվել է այն խաղաղ, թե պատերազմական ժամանակ, միջազգային իրավունքի նորմերը խախտող հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն իրականացնելու համար»¹²: Ուշադրության է արժանի այն, որ կոնվենցիան ստորագրող պետությունները ոչ թե սահմանում են, որ ցեղասպանությունը հանցագործություն է, այլ հաստատում են այդ իրողությունը, ինչը կրկին նշանակում է, որ իրենք ընդունում են նախկինում տեղի ունեցած դեպքերը և շեշտում դրանց հանցագործություն համարվելը՝ անկախ այն բանից, թե դրանք իրականացվել են խաղաղ, թե պատերազմական ժամանակ:

Կոնվենցիայի բովանդակությունից ելնելով՝ միանգամայն կարելի է պնդել, որ այն միտված չէ միայն կանխելու հետագա ցեղասպանությունները, կամ պատժելու դրանք իրականացնողներին, այլ ուղղված է նաև դեպի անցյալ: Պատմությունը, որը վկայակոչվում է կոնվենցիայի նախաբանում, արդեն ապացուցել է, որ չդատապարտված ցեղասպանության օրինակը՝ Հայոց ցեղասպանությունը, քաջալերեց հաջորդ հանցավոր վարչակարգին՝ Երրորդ Ռայխին, կրկնելու այդ հանցագործությունն արդեն Երկրորդ աշխարհամարտի ընթացքում:

3. ՄԱԿ-ի 1968 թ. նոյեմբերի 26-ի և 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիաների հարաբերակցությունը

Թուրք «մասնագետների» պնդումները թերևս հիմնվում են նրա վրա, որ 1948 թ. կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝ տվյալ փաստաթղթի մեկնաբանման և դրա հետ կապված վեճերի քննարկման իրավասությունը հանձնվել է ՄԱԿ-ի Միջազգային դատարանին¹³: Ուստի 1948 թ. կոնվենցիայի հետադարձ ուժի կիրառման հարցը նույնպես նշված դատարանի որոշելիք խնդիրն է¹⁴: Սակայն չպետք է մոռանալ, որ դատարանի այդ իրավասությունը կոնվենցիայում ամրագրվել է 1948 թ. դրությամբ, որն ուժի մեջ է մտել 1951 թ., իսկ դրանից հետո միջազգային իրավունքը շարունակել է զարգանալ՝ տվյալ ոլորտում ընդունելով նոր փաստաթղթեր:

Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումից 20 տարի անց՝ 1968 թ. նոյեմբերի 26-ին ՄԱԿ-ն ընդունեց մեկ այլ կոնվենցիա՝ «Պատերազ-

11 Տե՛ս Права человека. Сборник международных договоров, т. 1, ч. 2, էջ 780:

12 Տե՛ս նույն տեղում:

13 Տե՛ս նույն տեղում, էջ 782:

14 Տե՛ս Վարդանյան Վ., Հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, «Նորավանք», Տեղեկագիր N 1 (17), Եր., 2006, էջ 25:

մական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին»: Նշված կոնվենցիայում պայմանավորվող կողմերն ընդգծում են, որ «պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար պատասխանատվության կանչելու կամ պատժելու վերաբերյալ առկա որևէ հռչակագրում, ակտում կամ կոնվենցիայում վաղեմության մասին դրույթ նախատեսված չէ»¹⁵: Ավելին, ընդգծվում է, որ տվյալ կոնվենցիայով միջազգային իրավունքում համընդհանուր կիրառության մեջ է մտնում «այն սկզբունքը, համաձայն որի պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար վաղեմության ժամկետ գոյություն չունի»¹⁶: «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» կոնվենցիայի առաջին հոդվածի b կետում հստակորեն նշված է այն պարտադիր դրույթը, որ «**անկախ կատարման ժամկետից** (ընդգծումը մերն է – Ա. Մ.) պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ որևէ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում»¹⁷:

Այսպիսով, ընդգծելով, որ վերոնշյալ հանցագործությունների նկատմամբ նախկինում որևէ միջազգային փաստաթղթում գոյություն չի ունեցել վաղեմության ժամկետի մասին դրույթ, ինչպես նաև հաշվի առնելով այդ հանցագործությունների՝ միջազգային իրավունքի տեսակետից առանձնապես ծանր լինելու հանգամանքը, ՄԱԿ-ը սույն կոնվենցիայով միջազգային իրավունքում շրջանառության մեջ դրեց պատերազմական և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու սկզբունքը:

1968 թ. կոնվենցիան պարզաբանումներ է տալիս նաև այն հարցի առնչությամբ, թե ինչ է հասկացվում «պատերազմական հանցագործություններ և մարդկության դեմ կատարված հանցագործություններ» եզրույթների տակ: Փաստաթղթի երկրորդ հոդվածի համաձայն՝ մարդկության դեմ կատարված հանցագործություն է համարվում նաև ցեղասպանության հանցագործությունն այնպես, ինչպես այն սահմանվել է ՄԱԿ-ի 1948 թ. Ցեղասպանության մասին կոնվենցիայով, նույնիսկ եթե այդ գործողություններն այն երկրում, որտեղ դրանք կատարվել են, ներքին օրենսդրության խախտում չեն համարվում¹⁸:

Եթե հաշվի չառնենք 1919 թ. թուրքական ռազմական տրիբունալում նախկին երիտթուրքական կառավարության անդամների դատավարությունը, ապա կարելի է այնդել, որ կոնվենցիայի սույն հոդվածն անմիջականորեն և այն էլ կրկնակի հիմքերով վերաբերում է հենց Թուրքիային: Ինչպես հայտնի է, թուրքական պետությունը և հանցագործության իրական կազմակերպիչները խուսափեցին պատասխանատվությունից, իսկ Օսմանյան կայսրության իրավաշարունակող Թուրքիայի քեմալական իշխանությունները

15 Международное право в документах, сост. сборника Н. Т. Блатова, М., «Юрид. лит.», 1982, էջ 833.

16 Նույն տեղում:

17 Նույն տեղում, էջ 834:

18 Տե՛ս Международное право в документах, էջ 834:

քանտերից ազատ արձակեցին ռազմական տրիբունալների վճիռներով նաև Հայոց ցեղասպանության համար դատապարտված հանցագործներին: Բացի այդ, ներկայիս Թուրքիան անհերքելի փաստերի առկայության պայմաններում շարունակում է ժխտել հայերի նկատմամբ իրագործված հանցագործության փաստը, պնդել, թե Ցեղասպանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիան հետադարձությամբ չի կարող կիրառվել հայերի հետ կատարված դեպքերի վրա՝ փորձելով այդ կերպ վաղեմության ժամկետը տարածել հայերի հետ կատարված դեպքերի նկատմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի 1968 թ. կոնվենցիան ուղղակիորեն հղում է կատարում Ցեղասպանության մասին կոնվենցիային, միաժամանակ կարելի է արձանագրել, որ առաջինը փաստորեն երկրորդի լրացումն ու շարունակությունն է, և պետք է կարծել, որ 1968 թ. կոնվենցիայով ՄԱԿ-ը, ըստ ամենայնի, ձգբրտում կատարեց 1948 թ. կոնվենցիայի կիրառման և նրա հետադարձ ուժ ունենալու հարցում: Այնպես որ, եթե անգամ ընդունենք, որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածով տվյալ փաստաթղթի մեկնաբանման, այսինքն՝ այն նաև հետադարձությամբ կիրառելու իրավասությունը պատկանում է ՄԱԿ-ի Միջազգային դատարանին, այդուհանդերձ կարծում ենք, որ դատարանը տվյալ հարցում չի կարող լիովին անտեսել կամ շրջանցել ՄԱԿ-ի 1968 թ. կոնվենցիայի վերոնշյալ դրույթները, անկախ նրանից, որ այն վերաբերում է ֆիզիկական անձանց պատասխանատվության ենթարկելուն ու չի ընդունվել ավելի մեծ թվով երկրների, այդ թվում՝ Թուրքիայի կողմից:

4. Կոնվենցիայի կիրառելիության հարցը ՄԱԿ-ի Միջազգային դատարանի դատավարական պրակտիկայում

Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ պաշտոնական դիրքորոշում է արտահայտել նաև ՄԱԿ-ի Միջազգային դատարանը, երբ դեռևս 1951 թ. մայիսի 28-ին Գլխավոր Ասամբլեայի խնդրանքով հրապարակեց այդ փաստաթղթի առանձին դրույթների հետ կապված որոշ պետությունների կատարած վերապահումների իրավաչափության և կոնվենցիայի ոգուն ու բովանդակությանը դրանց համապատասխանելու վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը: ՄԱԿ-ի Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունում մասնավորապես նշվում էր, որ կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները ձանաչվում են բոլոր քաղաքակիրթ պետությունների կողմից որպես պարտադիր՝ անգամ առանց պայմանագրային ամրագրման¹⁹:

Ցավոք, ՄԱԿ-ի Միջազգային դատարանը «Խորվաթիան ընդդեմ Սերբիայի» գործով 2015 թ. մարտի 3-ին կայացրեց մի որոշում, որն իմաստային առումով հակադրվում էր 1951 թ. մայիսի 28-ին իր իսկ կողմից ընդունված խորհրդատվական եզրակացության բովանդակությանը: Տվյալ գործով կայացրած վճռում դատարանը նշում էր, որ ցեղասպանությունը պատժելու պարտավորությունը, ինչպես նաև Ցեղասպանության մասին կոնվենցիայի

19 Stü Genocid армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Составитель, отв. редактор, автор предисловия и комментария д.и.н., профессор Ю. Г. Барсегов, т. 1, изд. «Гардарика», М., 2002, док. 15, էջ 32:

այլ դրույթները նախատեսված են եղել կիրառելու հետագայում կատարվելիք, այլ ոչ թե Երկրորդ համաշխարհային պատերազմում կամ դրանից առաջ տեղի ունեցած արարքների նկատմամբ²⁰: ՄԱԿ-ի Միջազգային դատարանն իր այս որոշումը հիմնավորում էր նրանով, որ Խորվաթիայի հայցում նշված հանցագործությունները կատարվել են Ցեղասպանության մասին կոնվենցիային այդ երկրի միանալուց առաջ, ուստի նշված դեպքերի նկատմամբ հետադարձությամբ որոշում կայացնել հնարավոր չէ:

Այս դիրքորոշումը որոշակիորեն հակասում է նույն դատական ատյանի կողմից 1951 թ. մայիսի 28-ին ընդունված խորհրդատվական եզրակացության մեջ տեղ գտած այն ձևակերպմանը, թե «կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները ճանաչվում են բոլոր քաղաքակիրթ պետությունների կողմից որպես պարտադիր՝ անգամ առանց պայմանագրային ամրագրման»: Սրանով դատարանն արձանագրում էր Ցեղասպանության մասին կոնվենցիայի կողմից ֆիկացնող փաստաթուղթ լինելու հանգամանքը, որը ներառել է միջազգային սովորության իրավունքի այն նորմերը, որոնք նախկինում ճանաչված են եղել իբրև պարտադիր և առանց պայմանագրային ամրագրման կիրառվել են քաղաքակիրթ պետությունների կողմից: Ասվածից բխում է, որ քննարկվող փաստաթղթի դրույթները նաև հետադարձությամբ կիրառվելու հնարավորությունը չի կարող սահմանափակվել կոնվենցիայի ստորագրման և ուժի մեջ մտնելու ամսաթվերով:

Այս երկու որոշումների հակասականությունը գալիս է հաստատելու այն իրողությունը, որ դատական ատյանները, անգամ այնպիսի հեղինակավոր դատարան, ինչպիսին ՄԱԿ-ի Միջազգային դատարանն է, ոչ միշտ են առաջնորդվում բացառապես իրավունքի, տվյալ դեպքում՝ միջազգային իրավունքի նորմերով ու սկզբունքներով: Գաղտնիք չէ, որ միջազգային դատական ատյանների կայացրած որոշումների վրա նույնպես որոշակի ազդեցություն են ունենում քաղաքական գործընթացները, աշխարհաքաղաքական զարգացումները: Օրինակ, երբ Արևմուտքին հարկավոր էր տրոհել նախկին Հարավսլավիան և տապալել դեպի Ռուսաստան կողմնորոշված Միլոշեվիչի վարչակարգը, այդ գործին էին լծվել ոչ միայն Հյուսիսատլանտյան դաշինքը, որն առանց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համաձայնության ռմբակոծում էր մայրաքաղաք Բելգրադը, այլև միջազգային դատական ատյանները: 2007 թ. փետրվարի 27-ին կայացրած որոշմամբ ՄԱԿ-ի Միջազգային դատարանը Հարավսլավիային մեղավոր ճանաչեց Սրեբրենիցայում կատարված ցեղասպանությունը կանխարգելելու՝ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունը չկատարելու մեջ՝ հարկադրելով «Նախկին Հարավսլավիայի Միջազգային քրեական տրիբունալին» հանձնել գեներալ Ռադկո Մլադիչին²¹: Սերբիայում ռուսամետ վարչակարգի տապալումից հետո ԱՄՆ-ի և ԵՄ-ի համար այլևս իմաստ չունեցող պատժամիջոցներ ու ճնշումներ գործադրել արդեն դեպի Արևմուտք կողմնորոշված սերբական նոր իշխանությունների նկատմամբ, ուստի «Խորվաթիան ընդդեմ Սերբիայի» գործով որոշում կայացնելիս ՄԱԿ-ի Միջազգային դատարանն առաջնորդվեց իր կողմից նախկինում

20 Տե՛ս Վարդանյան Վ., Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները, ԵՊՀ հրատ., Եր., 2017, էջ 118:

21 Տե՛ս Մարտիչյան Ա., Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, «Տիր» հրատ., Եր., 2014, էջ 75:

ընդունված որոշմանը հակասող այլ իրավական հիմնավորումներով:

Այս ամենը նշանակում է, որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթները Հայոց ցեղասպանության նկատմամբ հետադարձությամբ կիրառելու հարցում կարելի է պնդել, որ Միջազգային դատարանի կողմից իբրև նախադեպ դիտարկվի ոչ թե «Խորվաթիան ընդդեմ Սերբիայի» գործով կայացրած որոշումը, այլ նույն ատյանի 1951 թ. մայիսի 28-ի խորհրդատվական եզրակացությունը:

Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձ կիրառելիության դեմ տեսակետներին կարելի է հակադարձել նաև Նյուրնբերգյան և Տոկիոյի տրիբունալներում մարդկության դեմ կատարված հանցագործություններն ու, մասնավորապես՝ ցեղասպանությունները հետադարձությամբ դատապարտած վճիռներով, որոնց իրավականությունը քննարկման ենթակա չէ:

Ի վերջո, անհնար է անտեսել այն իրողությունը, որ քանի դեռ չեն հաղթահարվել Հայոց ցեղասպանության հետևանքները, և հայ ժողովուրդը շարունակում է կրել այդ հետևանքները, ուրեմն խոսքը շարունակվող հանցագործության մասին է: Ինչպես հայտնի է, շարունակվող հանցագործություններն իրենցից ներկայացնում են նույնաբովանդակ հանցավոր գործողություններ, որոնք միտված են ընդհանուր նպատակին և մեկ ընդհանուր միասնություն են կազմում: Շարունակվող հանցագործության սկիզբը համարվում է նույնաբովանդակ արարքներից առաջին գործողության կամ անգործության կատարումը, որը մեկն է այն հանցավոր գործողությունների շարքում, որը կազմում է մեկ ընդհանուր հանցագործության բաղադրիչը, իսկ ավարտը՝ վերջին հանցավոր գործողությունը կամ անգործությունն է²²:

Շարունակվող հանցագործության նշված հատկանիշներին լիովին համապատասխանում են Թուրքիայի Հանրապետության կողմից պետական բարձր մակարդակով իրականացվող Հայոց ցեղասպանության ժխտողականությունը, ինչպես նաև հայերի պատմամշակութային ժառանգության ոչնչացմանն ու յուրացմանն ուղղված «մշակութային եղեռնի» քաղաքականությունը: Թուրքական իշխանությունների այս գործելաոճն, ըստ էության, հայ ժողովրդի նկատմամբ Օսմանյան կայսրության կողմից իրականացված ցեղասպանական քաղաքականության շարունակությունն է այլ մակարդակներում, իսկ տվյալ պարագայում Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձությամբ կիրառելու հարց առհասարակ չի կարող առաջանալ:

5. Առաջարկներ Կոնվենցիայի կիրառելիության հնարավորությունների վերաբերյալ

Ամփոփելով նշենք, որ իր թերություններով հանդերձ Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումը լուրջ առաջընթաց էր միջազգային իրավունքում, և այդ փաստաթուղթը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման միջազգային իրավական կարևոր գործիքներից մեկն է: Ուստի ելնելով վերը նշվածից՝ կարող ենք Ցեղասպանության մասին կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի կողմից ձեռնարկվելիք իրավական

22 Տե՛ս Кибальник А. Г., Современное международное уголовное право. Понятие, задачи и принципы, изд. «Юридический центр Пресс», СПб., 2003, էջ 166:

հնարավոր քայլերի վերաբերյալ որոշ առաջարկներ ներկայացնել: Իբրև Ցեղասպանության մասին կոնվենցիայի անդամ պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը տեսականորեն կարող է՝

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստաթղթի 9-րդ հոդվածով դրա դրույթների մեկնաբանության, կիրառելիության և գործադրման, ինչպես նաև 3-րդ հոդվածում նշված գործողությունների համար պետությանը պատասխանատվության կանչելու հնարավորության հարցերը հանձնված են ՄԱԿ-ի Միջազգային դատարանի իրավասությանը, Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության ժխտողականությունն իբրև այդ հանցագործության հանցակցություն որակելու հիմքով դիմել միջազգային ատյանին՝ պահանջելով պատասխանատվության կանչել վերջինիս:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիան ժխտում է Հայոց ցեղասպանության փաստը, հիմք ընդունելով Կոնվենցիայի 9-րդ հոդվածի դրույթները՝ Հայոց ցեղասպանության հիմնահարցը կարող է ներկայացվել իբրև Կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև առկա վեճ, և առանց վերջինիս համաձայնությունը ստանալու գործն անմիջապես հանձնել Միջազգային դատարանի քննությանը:

3. Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ դիմել ՄԱԿ-ի համապատասխան մարմնին (օրինակ՝ Անվտանգության խորհրդին)՝ պահանջելով ձեռք առնել կազմակերպության կանոնադրության դրույթներից բխող բոլոր միջոցները Հայոց ցեղասպանության ժխտողականությունը կանխելու նպատակով:

Ակնհայտ է սակայն, որ ինչ հիմքով էլ Հայաստանը Հայոց ցեղասպանության գործով փորձի դիմել ՄԱԿ-ի Միջազգային դատարան, այդ իրավական գործընթացը պետք է լրջորեն նախապատրաստված ու ապահովագրված լինի դրան նախորդող ու դրա հետ զուգահեռ տարվող քաղաքական գործընթացով: Քաղաքական ուղղությամբ տարվելիք նախապատրաստական աշխատանքները կարող են ենթադրել հետևյալ գործողությունները՝

1. Աշխատանք պետք է տարվի Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած երկրների ու միջազգային կազմակերպությունների հետ այն իմաստով, որ ռացիոնալացվեն նրանց կողմից ընդունված բանաձևերն ու որոշումները: Անհրաժեշտ է ջանքեր գործադրել, որ տարբեր երկրների խորհրդարանների կողմից ընդունված Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերը, որոնք հայեցողական փաստաթղթեր են, վերածվեն օրենքների: Այդ դեպքում տվյալ երկրների արտաքին քաղաքական գերատեսչություններն իրենց քաղաքականությամբ պարտավորված կլինեն սատարել Հայաստանին, երբ վերջինս պատրաստ լինի այդ գործով դիմել միջազգային դատական ատյանին:

2. Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունն իր դիվանագիտական ներկայացուցչություններով ու Սփյուռքն իր լոբբիստական կառույցներով պետք է փորձեն համատեղ ներագրել միջազգային հարաբերությունների ազդեցիկ դերակատարների, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի և ԵՄ-ի վրա և հասնեն նրան, որ մասնավորապես ԱՄՆ-ի և ԵՄ-ի Թուրքիայի հետ ունեցած հակասություններն ու տարաձայնությունները ծառայեցվեն Մի-

ջազգային դատարանի կողմից Հայոց ցեղասպանության գործով համար-
ժեք որոշում կայացնելու և այդ հանցագործության հետևանքների հաղ-
թահարման գործին:

Արմեն Յ. Մարուքյան – հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզու-
ներով 10 գրքերի, 50-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ,
փաստաթղթերի չորս ժողովածուների կազմող: Գիտական հե-
տաքրքրություններն են՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանու-
թյան պատմության, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթա-
հարման հիմնախնդիրները:

Summary

ON THE ISSUE OF APPLICABILITY OF PROVISIONS OF UN CONVEN- TION ON DECEMBER 9, 1948 TO THE ARMENIAN GENOCIDE

Analysis and suggestions on the occasion of 70th anniversary of
adopting the document

Armen Ts. Marukyan

Key words – Ottoman Empire, Genocide of Armenians, All-
Armenian declaration, overcoming consequences of genocide, UN
Convention on December 9, 1948, Advisory opinion of the Inter-
national Court of Justice.

The all-Armenian declaration on January 29, 2015 according to which except
the international recognition and condemnation also the task of overcoming con-
sequences of the Armenian Genocide was set, again staticized a question of ap-
plicability of provisions of the UN Convention of genocide in relation to the crime
committed against the Armenian people.

Still on May 28, 1951 in the Advisory opinion of the International Court of
Justice it was noted that under the conditions of lacking the convention the
provisions specified in the Convention of the UN on genocide were obligatory
for civilized countries even without conventional fixing. It follows from this that
signing and entry into force of the convention cannot be speculated for the
purpose of restriction of use of these principles and norms to the events taking
place before the adoption of this document.

In 20 years after adoption of UN Convention on genocide the convention of
the UN “About non-use of a limitation period to war crimes and crimes against
humanity” on which the principle of inapplicability of limitation periods con-
cerning military crimes and crimes against humanity irrespective of time of their
implementation was adopted on November 26, 1968. This convention meant by
“crimes against humanity” also the crime of genocide as it is formulated in UN
convention on genocide.

Finally it is impossible to forget that consequences of the Armenian Genocide are still not overcome, and the Armenian people – the victims of this crime, continues to test its consequences, that is, it is about the continuing crime. Denial policy of the Armenians Genocide on a national level by the modern Republic of Turkey and also implementation by the Turkish authorities of “cultural genocide” – destructions of historical and cultural heritage of the Armenian people on its historical homeland – in the Western Armenia, is continuation of genocidal policy of its predecessor – the Ottoman Empire. In this case the question of retroactive application of provisions of the Convention of the UN on genocide in general disappears.

Резюме

К ВОПРОСУ О ПРИМЕНИМОСТИ КОНВЕНЦИИ ООН О ГЕНОЦИДЕ ОТ 9-ГО ДЕКАБРЯ 1948 ГОДА К ГЕНОЦИДУ АРМЯН

Анализ и предложения в связи с 70-летием принятия
документа

Армен Ц. Марукян

Ключевые слова – Османская империя, Геноцид армян, Общеармянская декларация, преодоление последствий геноцида, Конвенция ООН от 9-го декабря 1948 года, консультативное заключение Международного суда.

В Общеармянской декларации от 29 января 2015 года, кроме международного признания и осуждения Геноцида армян, ставилась также задача преодоления его последствий. Это означает, что снова актуализировался вопрос о применимости положений Конвенции ООН о геноциде по отношению к преступлению, совершенному против армянского народа.

Еще 28 мая 1951 года в консультативном заключении Международного суда ООН отмечалось, что в условиях отсутствия конвенции указанные в Конвенции ООН о геноциде положения были обязательны для цивилизованных стран даже без конвенционального закрепления. Из этого следует, что подписание и вступление в силу конвенции не могут спекулироваться с целью ограничения применения этих принципов и норм к событиям, имевшим место до принятия данного документа.

Через 20 лет после принятия Конвенции ООН о геноциде, 26 ноября 1968 года, была принята конвенция ООН «О неприменении срока давности к военным преступлениям и преступлениям против человечества», по которой вводился принцип неприменимости сроков давности в отношении военных преступлений и преступлений против человечества, независимо от времени их совершения. Под «преступлениями против человечества» данная конвенция подразумевала также преступление геноцида, так как оно сформулиро-

14. **T'orikyan Sh.**, Haykakan harcə yev' mijazgayin orenqə, Peyrut, Hamazgayini Vahe Set'yan tparan, 1976 **(in Armenian)**.
- Vardanyan V.**, Hayeri dem iragorc'vac' cegh'aspanut'yan hamar Turqiayi Hanrapetut'yan mijazgayin iravakan patasxanatvut'yan himqerə, egh'anaknerə, dzeverə yev'tesaknerə, "Noravanq", Tegh'ekagir N 1(17), Y'er., 2006 **(in Armenian)**.
15. **Vardanyan V.**, Hayoc cegh'aspanut'yan c''anachman, datapartman yev' hetevanqneri veracman iravakan himnaxndirnerə, EPH hrat., Y'er., 2017 **(in Armenian)**.